

ՄՇԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԵՏԱԿԱՆ ԴԱՐԱՆ

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով
Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մեջ
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԵՐԿԱՅ 1900 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(28-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«Մշակ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մ շ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ՄԱՐՏԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 6 դոլլար. Եւ Ր օ յ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա Ր ս կ ա ս ա ն ի
բաժանորդները 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՄՈՎ (Բաղրամյան և Բարոնական փողոցների
անկիւնը):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելու, պէտք է գրել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ձ Է Ը Ն Դ Ո Ւ Ի Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հաղորդակցութեան ծրագիր.—Ներքին Տե-
ստիութիւն. Մամուլ. Դատաւարական գործ-
քից. Գլխաւոր մասնագործի նիստը. Երկրա-
չարքից յետադիմների օգուտն. Նամակ Գան-
ձակից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻ-
ԹԻՒՆ. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լու-
րեր.— Հեռագրութիւն.— ՅԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԻ
ՆԵՐՔԻՆ:

ՀԱՂԱՐԴԱԿՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

Գերմանական „Berliner Tageblatt“
լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում
է, թէ իրագործվելու վրա է երկաթու-
ղային մի կարեւոր գիծ, որ պէտք է կա-
պի Անգլիոյ վրայ և Սև ծովը Բարձր-Հայ-
քի հետ: Երկաթուղին պէտք է կապի Բա-
թումը Երզրումի հետ, անցնելով Տրապի-
զոնի միջով: Այդ երկաթուղու, ինչպէս և
Կարս-Երզրումեան երկաթուղու շինու-
թիւնը իր վրա է վերցնում Ռուսաստանը
և պէտք է իրագործի երեք տարվայ ըն-
թացքում, օգտվելով գինւորական ինժեներ-
ների և զօրքերի աշխատանքով:

Եթէ հաւատարի է այդ լուրը, շատ ու-
րախայի է, որ վերջապէս մեր դրացի եր-
կիրը կը մտնի կանոնաւոր հաղորդակցու-
թեան մէջ Անգլիոյ վրայ: Հետո՛ւ Մինչև այժմ
մեր պետական սահմանագիծը հանգիստ-
նում է իր տեսակի կարծես մի աշխարհի
վերջ: Մինչև սա համանազան եղանակ է
կենսաբան, մարդիկ գնում գալիս են, առե-
ւորով և ուրիշ գործով են զբաղված: Հա-
նելով սահմանագիծին, ամեն բան կանգ է
առնում և կարծես հանգիստում է մի անան-
ցանկի վիճի կամ պարսպի: Մինչդեռ երկու-
շարեան երկիրների մէջ կարող էր գոյու-
թիւն ունենալ արդիւնաբերական և ա-
ռեւորական մեծ փոխադարձութիւն, որ
այժմ շատ աննշան աստիճանի է հասնում:

Անգլիոյ վրայի և Փոքր-Ասիայի մէջ եր-
կաթուղի անցկացնելու հարցը յարուցված
է շատ վաղուց, իսկ 1893 թւին նա նոյն
իսկ շատ մօտ էր իրագործութեան: Սա-
կայի խնդրի լուծումը յետագիւցի մինչեւ
մեր օրերը, երբ կարծես արդէն ծրագիրը
մօտ է իր դրական լուծման: Լրագրական
տեղեկութիւններին նայելով՝ Թիւրքիան,
վերջով իր երկաթուղային այդ գծերի
շինութիւնը Ռուսաստանին, մի պայման է
գրել, որ և ընդունվել է, այն է, որ եր-
կաթուղիներից ստացած զուտ արդիւն-
քը գործադրի երկաթուղու գծի շրջա-
նում գտնվող երկրի բարեօրոշման համար:
Ժամանակ է, որ մեր սահմանակից

երկրները մտնէին կուլտուրական կանո-
նաւոր հաղորդակցութեան մէջ եւ շատ
յանկալի է, որ օր առաջ իրագործվէր եր-
կաթուղային գծերի ծրագիրը, որի մասին
այնքան վստահ երբեք իստում են թէ
արտասահմանեան և թէ ռուսաց լրա-
գիրները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Մշակ» անցեալ համարում մենք հաղորդե-
ցինք, որ Պետերբուրգում կազմվել է կանանց
պաշտպան մի ընկերութիւն, որի նպատակն է
կան ընդհանրականութեան դէմ եւ ազատել նրա
ձանկերից կանանց դժբաղդ զոհերին: «Съездъ
Курьеръ» լրագիրը, խօսելով այդ ընկերութեան
կանոնադրութեան մասին, յիշատակում է, որ
Մօսկվայում էլ կազմակերպվում է նոյն նպա-
տակին հետեւող մի այլ ընկերութիւն, որի
ծրագրած գործունէութիւնը աւելի օգտակա-
ր է երեւում, քանի որ այս վերջին ընկերու-
թիւնը պիտի գլխաւորապէս աշխատէ նախա-
պաշտպանական միջոցներ ձեռք առնել, որ-
պէս զի անօգնական կանայք եւ աղքատներ աղ-
քատութեան և կարօտութեան պատճառով
չեն կրնան անբարոյականութեան մէջ: Պետեր-
բուրգի ընկերութիւնը գլխաւորապէս «փրկե-
լու» մասին է մտածում. նա պիտի ազատէ ա-
նառականութեան տներում բռնադատվածներին եւ
պիտի հաստատէ Ս. Մագդալինէի անունը կը-
րող այն հիմնարկութիւնները, որոնց մէջ կա-
րող են պատապարդվել այն կանայք, որոնք ա-
կամայ են իրանց մարմինը ծախում: Դա մի
սահմանափակ, նոյն իսկ ոչ շատ արդիւնաւոր
գործ է:

Բոլորովին ուրիշ բան է «նախապաշտպա-
նելու» գործը: Այստեղ նոր ընկերութիւն-
ները կը գտնեն աւելի նպատաւոր հող,
որի վրա կարելի է աշխատել, յոյս ունենա-
լով աւելի նշանաւոր հետեւանքների վրա:
Նայելով անառակութեան ծագման վրա տրե-
տեսական տեսակէտից, Մօսկվայի ընկերու-
թիւնը հասել է չափազանց ճիշդ եզրակա-
ցութեան, որ անհրաժեշտ է կազմել կանանց
աշխատութեան բիւրօ: Պետերբուրգի ընկե-
րութիւնն էլ խոստանում է նպատակով աշ-
խատանք գտնելու գործին: Ի հարկէ, այս
ամենը ցանկալի է, բայց այստեղ երկու ըն-
կերութիւններն էլ կը հանդիպեն կանանց
անյաղնիք խոչընդոտների, եթէ կանա-
ցի աշխատութեան չըջնալը չը լայնացնի:
Պէտք է չը մոռանալ, որ անառակութիւնը
իր գոհներին հաւաքում է հասարակական
գիւղերի, զարգացման եւ կրթութեան շատ
բարձրագույն աստիճանների վրա գտնվող կա-
նանցից: Ուրեմն, պէտք է աշխատել, որ ա-
ռաջարկվող աշխատութեան չըջնանքն էլ

բազմազան լինեն: Վերջապէս, չէ կարելի ա-
սել թէ անառակութիւնը միմիայն տնտեսա-
կան պատճառներ ունի, թէ եւ սրանք առաջ-
նակարգ դեր են կատարում: Կան եւ ուրիշ
գործոններ, որոնք կնոջը դուրս են գցում
ազնիւ ճանապարհից: Ապահովել աշխատան-
քը միշտ չէ նշանակում ապահովել գոյու-
թեան մի լաւ միջոց: Պէտք է հոգ տանել
թէ այդ աշխատանքի պայմանների մասին,
թէ մենաւոր կանանց բազմութեան աղ-
քատի պայմանների մասին՝ նոր ընկերու-
թիւնները կարող էին շատ բան անել, եթէ
աշխատէին հիմնել կանանց միութիւններ եւ
կուղեր: Այսպիսի միութիւնները, հիմնվե-
լով լայն ինքնագործունէութեան վրա, կը
կարողանան պահպանել կնոջը անկումից
նոյն իսկ առանց բարեկրօնութեան օգնու-
թեան:

Որ կնոջ գործունէութեան համար չափա-
զանց միակողմանի ապարէզներ կան մեր մէջ—
այդ չէ կարելի ուրանալ. ուրեմն չէ կարելի չը
համաձայնվել յարգելի լրագրի հետ, որ պէտք
է աւելի մեծ ապարէզներ հարթել, աւելի
շատ դռներ բանալ աշխատուոր կանանց առ-
ջեւ: Դա կը լինի ոչ միայն մի նախապաշ-
տպանական գեղեցիկ միջոց անառակութեան
դէմ, այլ եւ առհասարակ բոլոր կանանց հա-
մար կը լինի մի ճանապարհ, որ տանում է դե-
պի պատուաւոր եւ անկախ գոյութիւն:

Ջարմանալի առատ են հայի հոգու մասին
օր ու գիշեր մտածողները: Անա «Новое Время»
լրագրի թղթակիցը նկարագրում է Թէհրանը
եւ մենք տեսնում ենք, որ այնտեղ մի բուռն
հայերի համար եկեղեցի ու դպրոց ունեն կա-
թօլիկները, ունեն եւ անգլիական միսիօնար-
ները:

Մի խօսքով—ասում է թղթակիցը—չարա-
բախտ հայերին եւ ասորիներին, կարելի է
ասել, ծուռտում է զանազան դաւանու-
թիւնների հոգեւորականութիւնը: Չէ որ
այդ հոգեւորականութիւնը ձեռքի տակ չունի
մշակելու համար մի այլ նիւթ, որովհետեւ
պարսկները նախ չափազանց նուիրված են
մասնաշրջանականութեան եւ երկրորդ՝ պարսկի
քրիստոնէութիւն ընդունելը արգելված է եւ
մահապա պատիժ է սպասւում:

Եւ անա Աստուծու համար հոգի որոնող-
ները ամեն միջոցի են դիմում գտնէ քրիստո-
նէական լուսնի զօրքերը ազատելու համար: Հ. Շար-
մաւանը ասում է թէ կաթօլիկութեան Աս-
տուծան է կոտորել տալիս հայերին—եւ հայե-
րը վազում են նրա ետեւից. անգլիացի միսի-
ոնարը իր Աստուծուն է այդ պատմի հեղինակ
հրատարակում եւ մի քանի հոգիներ ձեռք բե-
րում: Մկրտչականը իր Աստուծուն է առաջ
քաշում, կրկնակրօնները իր Աստուծուն, երի-
ցականը իր Աստուծուն. միւս կողմից էլ քրդի
Աստուծան է գալիս ասելու թէ ինքն էլ խա-
տելու համար կոտորած ուղարկեց ու հազա-
րաւոր մարդիկ է տանում Մուհամմէդի գիրկը:
Մի խօսքով բոլոր աստուածները միացել են
հայի դէմ, խեղճ են ընտելում նրան հարկւր հա-
զար գիտնելով: Միայն հայի Աստուծան է
լուռ ու անտարբեր մնացել. թէ գուցէ հայը
Աստուծան էլ չէ ունեցնում: Գարողիչները այդ-
պէս են ասում եւ միմեանց ձեռքից խլում են
այդ անտէր, վաճառովի հոգիները: Ո՛րքան
խեղճ ու անպատիւ ժողովուրդ ենք եղել մենք...

Այս չաբաթ մենք ժամանակ չունեցանք մեր
ընթերցողներին յայտնելու, որ անցեալ կիրակի
օրը Տիգրան Նազարեանցի համար վերին առ-
տիճանի պիկանտ չիկերի մի կատարեալ տօն
էր: Ինչպէս յայտնի է ամբողջ տիեզերքին,
հայոց ազգը անմահներ շատ ունի հէնց ներ-
կայումս, բայց աւելի շատ են անմահութեան
կանխդրանները, որոնց մէջ—բոլորովին կա-
կած չը կայ—գրված է եւ ինքը, Տիգրան Նա-
զարեանը: «Մշակը» մի քիչ խանգարում է
«Թաթարական» անմահներին, եւ անա Տիգ-
րան Նազարեան, անցեալ կիրակի օր թեւա-
նուցում րոնած նոր թիւած անմահին, դուրս ե-
կա «Մշակի» դէմ: Ոչինչ մոռացված չէր. քնն-
գալական կրակներ, չինական լապտերներ, եւ-
րոպայի ամենաշքեղ սալօնների չէմբերից հա-
ւաքած զարդեր ու պաճուճանքներ, որոնցով

Տիգրան Նազարեանը այնքան երջանկացնում
է հայոց ազգը, եւ—ս սեւ ապերախտութիւն—
միշտ մնում է չը գնահատված, «ձեռքերը
ծոցին, գլուխը կախ արած»... Մի խօս-
քով բոլոր, բոլոր չիկերը դուրս էր հա-
նել. էլ ինչ «Մշակին» խղճալ, էլ ինչ
«հաւատացէք մեզ», էլ ինչ «անկեղծ դաւ»,
էլ ինչ «մեր ուղղութիւն», ինչ դատողութիւն-
ներ պատկերների մասին: Չը գիտենք, թէ
այսքան չիկեր ինչպէս ստեղծեց Տիգրան Նա-
զարեանը եւ այսքան պիկանտութիւն տուեց
նրանց: Այո, Տիգրան Նազարեանը ճշմարտա-
պէս մի անբաղդ նախադաս է հայոց ազգի հա-
մար... Այնքան չիկ, այնքան ֆէրիական տե-
սարաններ նոր պատկան անմահի հետ գրկա-
խանված: Եւ ինչպէս շանուհեք անբախտ
նահատակ, քանի որ նա լուրջ մարդու պէս
է կատարում այդ զուլիսօնները: Փորձեցէք
ասել Տիգրան Նազարեանին, որ եկած հաւերն
անգամ ծիծաղում են նրա խօսքերի, նրա քափ
ու փրփուրի վրա, եւ նա ձեզ կասէ, որ ա-
մենամեծ չիկը հէնց դա է... Բայց մենք թող-
նենք այդ բոլորը, արդէն չափազանց վերա-
ւորական կը լինէր Տիգրան Նազարեանին որ
եւ է նշանակութեան արժանացնել դրական
հարցերի մէջ: Անա աւելի ընդհանուր փաստը
«Մշակի» № 25-ի մէջ մի լուր կար թէ ժողո-
վրդական լուսաւորութեան միսիօնարները
ներկայացնելու է մի նախագիծ, «որով աւե-
լացնվում է օրիորդաց ուսումնարաններում
ծառայող կառավարչութիւնների եւ ուսանող-
ուհիների կինսաթիւնը»: Այս «ուսանող-
ուհիներ» բառը մի պարզ տպագրական սխալ
է, որը մենք չուղղեցինք, կարծելով որ ամեն
մէկը կը հասկանայ, թէ խօսքը ուսուցչու-
հիւնքի մասին է, քանի որ ոչ մի ուսանող-
ուհի կինսաթիւն չէ ստանում: Տիգրան Նա-
զարեանը վերցրել և արտատպել է այդ լուրը,
թողնելով նոյն սխալը, որով եւ մասնակ է իր
գեղարուեստական գոյութիւնը: Յանդգնու-
թիւն ունենալ «ուղղութեան» մասին խօսելու,
կոտորների վրա բղաւել աստուածների, գե-
ղարուեստի, երկնքի ու երկրի մասին եւ վերջ
ի վերջոյ շնորհ չունեցող զոքացած լուրը
գտնէ արդարեւ—անա ինչ ողորմելի կոտո-
րանքներ են մնում ֆէրիաներից, չիկից եւ
աչքակապութեան ուրիշ թողութիւն...

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՆՆԻՃԻՑ (Սանդաճների գործը)

Քալանթար. «Մշակ» լրագիրը իր գոյու-
թեան ամբողջ ընթացքում թէ իր հիմնադրի
ժամանակ եւ թէ այն օրից, որ գտնվում է
իւր խմբագրութեան տակ, նուիրել է բազմա-
թիւ յօդուածներ վաշխատունների, տղերքների
եւ գիւղական «բոնիք» գործունէութեան: Մա-
նուհանդ այն օրից, երբ հրատարակվեց 1893
թւի վաշխատունների մասին օրէնքը
եւ երբ վաշխատունի կանախանքները
ձեւակերպվեցին աւելի որոշ կերպով, հասա-
րակական այդ շարքի դէմ կալու դարձաւ
համեմատաբար աւելի անաչելի եւ կարելի
Գաւառական թղթակիցները, յանձն առնելով
վտանգ իրանց համար, ներկայացնում էին գա-
ւառական կանանց տխուր պատկերներ, իբրեւ
արդիւնք զանազան տեսակ հարստահարչների
գործունէութեան: Այդ դեպքում, գրկանքներով
լի, աշխատանքը ունեցաւ բարեբար հետեւանք-
ներ: Գաւառական հարստահարող սկսեց փոքր
ի շատէ քաշվել, աչքի առաջ ունենալով հրա-
պարակական մեղադրանքներ: Թղթակցութիւն-
ներ տպվեցին մեր երկրի բոլոր մասերից: Այդ-
պիսով Ախալքալաքի թղթակցութիւնները մի
անօրինակ, չը տեսնված նոր մուծուած թիւն-
ներ չէին, կամ այնպիսի մի բացառու-
թիւն, որ ստեղծված էին յատկապէս եւ
չարամտութեամբ միայն յայտնի անձի
համար: Նոյն իսկ մեր Ախալքալաքի թղթակի-
ցը միայն Սանդաճներով չէր զբաղված: Մին-
չեւ անգամ այն երկու թղթակցութիւններից
երկուսն է, որ հարցը ընդհանուր է գրված եւ
լայն հասարակական հոգի վրա: Եւ առաջ կը

Երկրաչափից ֆեռամպա՝ չըլնանի գիւղական
ղղաբնակութիւնը իր ցանքսը աճեում է
անարեա ըացաւապէս գարնանը։ Ախաբա-
քի կամ Զաւարքի սարահարթի բարձրու-
իւնը ծովի մակերեւոյթի վրա անկարելի է
արձնում աշնանացանը, որովհետեւ ցանքը
ստում է ձմեռվայ ցրտերէն։ Բացառութիւն է
սպում աշնանացան չօվարը, որ ցանվում է
էջ քանակութեամբ։ Սովորաբար գիւղացիներ
ը ցանում են դարբանացան ցորեն եւ դար-
բանացան ցորեն։ Այսօր էլ ինչ էլ ինչ

չեւ դարձան վերջը եւ կարող են արտահանուիլ իսկ բազմաթիւ նոսր եւ համեղ պտուղներ, ինչպէս են օրինակ՝ ծիրանը, դեղձը, սալորը, կեռասը չեն արտահանուում։ Նրանք դեմացկուն չեն եւ կարճ ժամանակում փութում են եւ ոչնչանում։ Այդ պատճառով նրանք ցածր գնով են վաճառուում։ Աւելի օգուտ կարելի կը լինի ստանալ այդպիսի պտուղներից, նոյնպէս եւ ցածր տեսակի խնձորներից եւ տանձերից՝ եթէ նրանք չորացնուին, իսկ չոր մրգեղէնը հեշտ է արտահանել։ Չոր մրգեղէնի մեծ պահանջ կայ թէ Եւրոպայում եւ թէ նոյն իսկ Ռուսաստանում, որտեղ գործ է ածվում տարւիկայ ընթացքում մի քանի միլիոն պուր։ Միայն Ամերիկայի Միացեալ Նահանգներէն Ռուսաստանը ստանում է իւրաքանչիւր տարի երկու միլիոն պուրից աւելի չոր մրգի։ Հաշուելով պուրը ամենապակասը 3 րուբլի՝ դուրս կը գայ, որ Ռուսաստանը չոր մրգեղէն գնելու համար իւրաքանչիւր տարի տալիս է միայն Ամերիկայի Միացեալ Նահանգներին մինչեւ վեց միլիոն րուբլի։ Անգրիկականը, որտեղ այդ պահանջները բաւական տարածված է՝ կարող է արտահանել ոչ թէ վեց միլիոնի չոր մրգեղէն, այլ մի քանի անգամ աւելի, եթէ նրա ժողովուրդը կարողանայ չորացնել իր այգիների պտուղները այնպէս, ինչպէս չորացնում են Ամերիկայում։ Նոյն իսկ Անգրիկականի մեծ ու փոքր քաղաքներում, որոնց ժողովուրդը պարապմունքի մի ձեւը այնպէս նախընտրում է, վաճառվում է ամենաբարձր գնով արտասահմանի մրգեղէն, ինչպէս են ծիրանի չիրը, սալորայիրը, չամիչը եւ այլն, իսկ մեր միջրը հազիւ է վաճառվում, այն էլ ցածր գնով, եւ գնում են միայն տեղական բնակիչները։ Մեր համեղ պտուղներից, չորացնելու եղանակը չը գիտենալու պատճառով, ստացվում է կոպիտ, անհամ եւ չուտ փողով մրգեղէն, որ, յայտնի ըստ է, չէ կարող մրցել արտասահմանի մրգեղէնի հետ։ Գրքոյի մէջ հեղինակը աշխատել է ծանօթացնել այդ եղանակներին պտուղ չորացնելու այն եղանակի հետ, որը գործադրվում է Ամերիկայում, Եւրոպայում եւ վերջին ժամանակները նաեւ Ռուսաստանի մի քանի մասերում, եւ հաղորդել ամբողջ կերպով գործին վերաբերեալ հարկաւոր գիտելիքները։ Գրքովը բաղկացած է փոքրագիր 52 էրեսից, գինն է 5 կոպէկ։

Իտալացի նշանաւոր դերասան Սալվինի այժմ ներկայացումներ է տալիս Պետերբուրգում։ Նա համաձայնվել է, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրիչները, այցելել նաեւ Մոսկվա, ուր փոքր թատրոնի խմբի հետ կը տայ երեք ներկայացումներ։ Երկու անգամ «Օտելլո» եւ մի անգամ «Morte civile» (Ոճրագործի ընտանիքը) պիտեսերը։

Ունեւորութիւնը ստացաւ՝ 1) Ջանաչլիլիի «Паруса Тамара» վերնագրով գրքովը, որ բաղկացած է 127 էրեսից եւ տպագրված է թիֆլիսում 1900 թ. Շարաձէի տպարանում։ Գրքովի գինը 50 կոպէկ է։ 2) «Պանդուխտ պատանի», կազմեց օր. Դ. Գուրստանցի։ Գրքովը պարտական է իր մէջ 221 էրես, տպագրված է թիֆլիսում 1900 թ. ինչպէս վրաց հրատարակչական ընկերութեան տպարանում։ Գինը 70 կոպէկ։ Գրքովի ձեռագիրն գտնվում է հետեւեալ մակագրութիւնը։—Յօդուտի մի մասը Ախալքալաքի երկրաշարժից վնասվածներին»։ 3) «Համառօտ քարոզներ», աշխատակրեց Ներսէս քահանայ Դամադեանցի։ Թիֆլիս, տպարան Շարաձէի, 1900 թ.։ Գիրքը բաղկացած է 306 էրեսից եւ արժէ 1 րուբլի։

Պեսեմբերի 9-ին մեղ գրում են. «Ամսիս 12-ին տեղիս բժշկական Ակադեմիայում բժիշկ Մ. Զաւրան աշուղութեամբ պաշտպանեց իր գրած դիսերտացիան «О связи между диатезом и расстройством обмена веществ» բժշկականի ստաթիսան ստանալու համար։ Գիտական այս աշխատութիւնը կատարված է Եւթօսկիկի կլինիկայում եւ վերաբերվում է գեղ մինչեւ այժմ սակաւ հետազոտված այն հարցին, որը ձգտում է յայտնի կապ գտնել որովայնային աֆիով հիւանդի մէջի եւ արեան ճերմակ գնդակիների հաշիւում մէջը։

Բէլի-Կլիի 28-ին մեղ գրում են. «Անցեալ օրը այստեղ պատահեց մի ցաւալի դէպք, որը կրկին անգամ ապացուցեց մեր մայրերի անհոգութիւնը։ Տեղիս խանութպան Ս. Մկրտչեանցը, թողնելով մանր երեխաներին տանը միայնակ, ինքը կնոջ հետ երեք օրով գնում է թիֆլիս Երեւանից մէկը, 9—10 տարեկան

մի աղջիկ, գոգնոցի ծայրերով կրակով լի վառարան վերցնելիս, չորեք րոպէսում է եւ խեղճ երեխային քաղցած պահում։ Անմեղ գոգն ամբողջ օրը ցաւից տանջվելով, երկու յիսն հոգին աւանդեց եւ միւս օրը հողին յանձնվեց։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՎ ԵԶՅԱՐԱՐՈՒՄ

Ժնէվ, փետրվարի 15-ին

Ներկայ տարւիկ ընթացքում, ինչպէս երեւում է, եւրոպական կենտրոններում լոյս պիտի տեսնեն զանազան հրատարակութիւններ, որոնց նպատակը պիտի լինի ընդհանուր տեսութիւններ անել եւ զրահարկութիւններ դուրս բերել 19-րդ դարի մասին, որը շուտով ժամանակակից մարդկութեան համար կը դառնայ մի անցեալ։

Ներկայ նամակով ուզում եմ դարձնել ձեր ուշադրութիւնը մի այսպիսի գրական ձեռնարկութեան վրա, որ սկսված է Պարիզում, Ժնէվ ժողովրդականութեամբ։ Այդ անունը արդէն բաւական է ձեզ՝ գուշակելու համար, թէ ինչ ուղղութիւն եւ ինչ բնաւորութիւն պիտի ունենայ այդ հրատարակութիւնը։ Պ. Ժորէս, ինչպէս գիտեք, ամենայայտնի հրապարակախօսներից մէկն է Ֆրանսիայում, զեկալար սօցիալիստական կուսակցութեան, նախկին պատգամաւոր, խմբագիր «La Petite République» լրագրի, եւ ի դէպ շատ համակիր թիւրքաց հայերի հարցին, որի մասին նա մի քանի անգամ իր զօրեղ ձայնը բարձրացրել է Ֆրանսիական պարլամենտում։

Տարածաւոր հրապարակախօսը համաստեղութեամբ, եւ, եթէ կամենում էք, հետախուռթեմք, չէ բաւականացել միմիայն իր անուշնով, այլ իր հրատարակութեան մէջ միացրել է ժամանակակից Ֆրանսիայում յայտնի շատ անուններ, նախ ինչպէս՝ Միլլերան, սօցիալիստ-միլիտարը այժման կարգի մէջ, Վիլիամի—պատգամաւոր պարլամենտում, Ժիւլ Գիսո, Բուսսոն եւ ուրիշներ, որոնք մեծ հեղինակութիւն եւ անուն ունեն իրանց կուսակցութեան մէջ։

Այս աշխատութիւնը կրում է «Histoire Socialiste» անունը. հրատարակվում է փոքրիկ տետրակներով, չորսթիւ երկու տետրակ. գինը աւելի քան մատչելի, այն է 5 ամսում, ուրեմն մօտ 2 կոպէկ։ Ժնէվում արդէն ստացված են առաջին տետրակները, եւ ինչպէս երեւում է լրագրականաւոր խօսքերից, տարածվում է անաղին քանակութեամբ։ Բնական է դա. նախ այն պատճառով, որ նիւթը շատ հետաքրքրական է, իսկ գրողներն էլ շատ ծանօթ, եւ երկրորդ այն պատճառով, որ գինը մատչելի է նոյն իսկ յետին բանւորին, որի համար իսկի դժուար չէ չաբաթը երկու սու տալ՝ մի այդպիսի հրատարակութիւն ձեռք բերելու նպատակով։

«Պատմութիւնը» պիտի ընդգրկի 1789—1900 դարերը, ուրեմն սկսած մեծ-յեղափոխութիւնից մինչեւ մեր դարի վերջին օրերը։ Պատմական գէպերը եւ երեւոյթները, ի հարկէ, կը լուսաբանվեն, ինչպէս եւ սոված է առաջաւորի մէջ, սօցիալիստական տեսակէտից։—Այդ հանգամանքն առիթ է տուել արդէն մի քանի յարձակումներու եւ կարողացի, օրինակ, մի քանի քննադատական նկատողութիւններ, որոնց հեղինակները ուզում են հաւատացնել, թէ ներկայ «Պատմութիւնը» չի լինի անկողմնապահ եւ ուղղամիտ, այլ աւելի մի պրօպագանդ պատմական վարագործի տակ, եւ նոյն իսկ յեղաշրջված եւ շատ տենդերիցիոզ Դաժիշ չէ։ Պարոններ Ժորէս, Միլլերան, Վիլիամի եւ իրանց գործակիցները՝ թէ իրանց գրութեանը ընդհանրութիւնը երեք առիթ չեն տուել կարծելու, որ ընդունակ են յեղաշրջելու պատմական փաստերը, կեղծելու իրողութիւնները եւ գոհելու ճշմարտութիւնը՝ որ եւ է նպատակը։ Եւ եթէ նրանք իրանց ոգեւորութեան մէջ երբեմն երեւոյթները կը լուսաբանեն իրանց քաղաքական հայեացքների եւ կուսակցութեան տեսակէտից, դա կը լինի միմիայն ազգու ոգեւորութեան, միմիայն անկողմնապաշտպանութեան սխալ, բայց ոչ նախաւորածած աղաւաղում։

Մի փոքր աւելի պարզ դարձնելու տալու համար թող տուեք աւելացնել, որ այդ «Պատմութեան» մէջ կը մտնեն ուսումնասիրութիւններ, ի միջի այլոց, 48-ի յեղափոխութեան, երկրորդ կայսրութեան եւ Ֆրանս-գերմանական պատերազմի մասին, կը լինեն յատուկ գլուխներ՝ Կոմունայի եւ երրորդ հանրապետութեան

թեան վերաբերմամբ, եւ բացի դրանից հետազոտութիւններ, որոնց նպատակը պիտի լինի լուսաբանել Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ունեցած ազդեցութիւնը տնտեսական, սօցիալական եւ օրէնսդրական հարցերի վրա։ Հրատարակութիւնը զարգարված կը լինի բազմաթիւ նկարներով։ Իսկ առաջին տետրակի ձեւաւոր զարգարում են այնպիսի յայտնի անձանց գլուխներ, ինչպէս են Բաբի, Սէն Սիմօն, Գիւլիէ, Կարլ Մարքս, Լուի Բլան, Պրուդօն եւ Բլանքի։

Այս տեսակ, եթէ այսպէս կարելի է ասել, հարկւրամեկեան հրատարակութիւններ, ինչպէս վերեւ յիշատակեցի, շատ կը լինեն, եւ եւ, առիթը ձեռքից բաց չեմ թողնի, արժանաւորների մասին հօտէ, համառօտ կերպով հաղորդելու հայ ընթերցողներին, որոնք, ի հարկէ, բաղդ չեն ունենայ այսպիսի աշխատութիւններ տեսնելու մայրենի գրականութեան մէջ։

Ս. Մալումեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«С. Пет. Вѣд.» լրագրում կարգում ենք. «Վանից գրում են Կ. Պոլսի լրագրիչներին, թէ այնտեղի Ֆրանսիական հիւպատոսի պաշտօնաւոր կատար մի քարոզիչ, Ջուլիանի կիսանունով հրատարականքներին 300 լիւր ուղարկելով, սպասում է աւելի մեծ օժանդակութեան կաթիլի միջադանութիւնների կողմից, որպէս զի գնայ լուսնը եւ կաթիլի եկեղեցու գիրքը ընդունէ ամբողջ նետարական ազգայնականներ, որի թիւը 50—60 հազարի է հասնում։ Ասորի-քաղդէականների Կ. Պոլսի պատրիարքը, աւելացնում է նոյն լրագրիչը, դիմեց ամեն հնար եղած միջոցի վանի վրայէթում գտնվող իր բազմաթիւ հօտ պահելու հայրենի եկեղեցու ծոցում եւ թող չը տալու, որ նրանք հարկադրել հանգամանքներից ստիպված կաթիլի թիւն ընդունեն։ Մեծ-վրդերը, ներքին գործերի միլիտարը եւ պետական խորհրդի նախագահ Սալիդ-փաշան խոստացան պատրիարքին ամեն կերպ աջակցել Ջուլիանիկի նետարականների նիւթական ծանր վիճակը թեթեւացնելու եւ այդպիսով դաւանափոխութեան առաջին անձնուրդը։ Մի այլ վրայէթի էրզրումի ազգաբնակիչները մինչեւ այժմ չը տեսնում ձեռնաժամի մէջ է գտնվում Առեւտուրը բոլորովին կանգ է առել, ուստիս պաշարեղէնները սաստիկ թանկացել են, քրիստոնեաները չնչին գնով ծախում են թուրքերին իրանց անային կահ-կարասիքը եւ անասունները, որպէս զի չը մոռնեն քաղցից եւ վճարեն հարկերի ապագայները։

—Կրօնի մեծ անձնատուր լինելով՝ Օրանսեան հանրապետութիւնը գրկելից իր գինաւորված ոյժերի ամենամեծ մասից՝ ծանապարհը դէպի Բլումֆօնտէն, դէպի հանրապետութեան մայրաքաղաքը, անգլիացիների առաջ հիմա բաց է արդէն։ Պրօֆէսոր Բրէյս իր «Ճանապարհորդական գիտողութիւնները Հարաւային Աֆրիկայում» գրքի մէջ այսպէս է նկարագրում Բլումֆօնտէնը։ «Այս քաղաքը գտնվում է Կապաղաղը Պրետորիայի հետ միացնող երկաթուղային գծի վրա, մի բլրի տօթորոտում, որի հարաւային եւ արեւմտեան կողմերում ձեռք գտնւում են անվերջ տափարակներ։ Նրա օդը չոր եւ առողջարար է եւ անանձնապէս օգտակար պէտք է լինի թղթային հիւանդութիւններ ունեցողի համար։ Ընդհանրապէս Բլումֆօնտէնը աշխարհի ամենագեղեցիկ եւ ամենաբարեկարգ քաղաքներից մէկն է։ Նրա մէջ կայ մի փոքրիկ բերդ, կան մի քանի եկեղեցիներ, ամեն տեսակ հասարակական հիմնարկութիւններ, հրապարակ, հասարակական ժողովարան, լաւ հիւրանոց, լայն, մաքուր փողոցներ եւ պարտէզներ։ Քաղաքում կայ նմանապէս եւ ազգային թանգարան, պալատական շինութիւն օրէնսդրական ժողովի համար անագին, գեղեցիկ կահաւորած եւ լուսավոր զանիւններով։ Քաղաքում մշտապէս խաղաղութիւն է տիրում. կանքը այնտեղ շատ պարզ է, բայց ուսուցիչ, ընակարանի եւ այլ ամեն պարագաների գնքը շատ թանկ է, իսկ ծառաները իրանց թանկութեան պատճառով համարեն անմատչելի են։ Կրօնական վէճեր ժողովուրդի մէջ չեն պատահում։ Առհասարակ, երաբակիւմ է Բրէյս իր նկարագրութիւնը, եւ տեսալ այդ քաղաքի մէջ իդէալական հասարակական կեանք։

—«Daily Chronicle»-ի թղթակիցը հետեւեալն է գրում Կիմբերլէյում պաշարված քաղաքացիների գրութեան մասին. «Կիմբերլէյի ժողովուրդը այժմ գիմում է Մօզեբի բանակը։ Կանաք եւ երկաթները սաստիկ աւժապաղտ են եղել պաշարման ժամանակ կրած զրկանքներից։ Վերջին ժամանակ նրանց կերակուրը ձիւ միւսն էր միայն։ Մասնաւոր անձանց ուսուցող պաշարեղէնները գրավւած էին եւ իւրաքանչիւր օր բաժանվում էին քաղաքի հրապարակում։ Մինչեւ անգամ ամենաստուգական ուսուցիչներ էր կարելի ճարել նոյն իսկ առասպելական գնքերով։ Մարդիկ իրանց զրկանքների մասին պաշարեղէն ժամանակ զարհուրելի պատմութիւններ են ասում, որոնք կարող են համեմատվել միայն Պարիզի պաշարման պատմութիւնների հետ։ Արեւի պաշարը սպառված էր. կաթիւները ուտում էին քաղցից սպառված ձիւների կէշեր։ Շատ կանաք եւ երկաթներ պարկում էին հանաքահորերի ստորերկրային անցքերում։

Երբ նրանք դուրս եկան լոյս աշխարհ՝ այնպիսի նիհար եւ զարհուրելի տեսք ունէին, որ կարծես գերեզմանից ելած ուրուականներ լինէին։ Ուրբաթ օրը շատերը առաջին անգամ տեսան արեւի երեսը՝ մի քանի չարաթ չարուհակ գետնախորդերում ապրելուց յետոյ։

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

16 փետրվարի

10-րդ 0-ն. Համայնքների ժողով։ Ունիդէյով յայտարարում է, թէ հէնց որ ապրանքատար նաւերը պարտաւտ կը լինեն՝ 8-րդ դիվիզիոն կողարկվի Աֆրիկա։ Ազատամարտ կուսակցութեան անգամ Գեղարքիլը հարցնում է, արդեօք ուս-պարսկական փոխառութիւնը անգլիական կառավարութեան գիտութեանը է կընդված եւ արդէ ի կառավարութիւնը որ եւ է քայլ այդ հարցի վերաբերմամբ։ Բրոքիլի առաջին հարցին բացատրական պատասխան է տալիս, իսկ երկրորդի մասին ասում է, թէ ոչ մի տեղեկութիւն առ այժմ այդ հարցի վերաբերմամբ հաղորդել չէ կարող։ Յետոյ Ունիդէյով կարգաց Բօբրոսի յայտնի հետագիրը եւ ապա նկատեց, թէ ազգը անգլիական դէմքի աջողութեան հանդարտութեամբ ընդունեց։ Գոհութեան առաջին արտայայտութիւններից յետոյ ուրախութեան ոչ մի ցոյցեր տեղի չունեցան. բայց անբըր զբօյակներով զարգարելուց եւ հրաւիրութիւնից։ Յիւրաք, տիրում է գոհութեան զգացմունք եւ ոչ ինքնավստահութիւն եւ անհեք եւս իրովին խոստովանում են, թէ պատերազմը նոր է սկսվում, թէպէտ եւ ունեցան աջողութիւնը կարող է էական ազդեցութիւն ունենայ պատերազմի վերջական ելքի վրա։

10-րդ 0-ն. Փետրվարի 13-ին։ «Standard»-ի հաղորդում են Պետերս-Ստացիօնից հետեւեալ. «Այսօր երկու պատերազմող կողմերի մէջ համաձայնութիւն կայացաւ դադարեցնելու թշնամական գործողութիւնները, որպէս զի կարելի լինի թաղել սպանվածներին»։

«Morning Post» ասում է. «Արդէն լավում են մեծահոգութեան կողմնակիցների ձայները, բայց այս կէտի վերաբերմամբ մենք ունենք 24-մեթրէյն խոստումը, թէ այս տեսակ պատերազմ այլ եւս չը պէտք է կրկնվի։

«Times» ասում է, թէ Կրօնի պարտութեան նշանակութիւնը հեշտ չէ որոշել։ Հօլանդացիները նոյնպիսի տուկու ազգ են, ինչպէս եւ բրիտանացիները եւ Բօբրոսի, երկուստիպիւմ կը լինի մի նոր յաղթութիւն եւս տանել, ուստի եւ պէտք է պատրաստվել շարունակելու պատերազմը։

10-րդ 0-ն. Գինեալ Գարտի բրիգադան յարձակում գործեց բօէրների դիրքերի վրա Պետերս-Հօլլի մօտ։ Ինչիս-Կիլիմիսֆի հրապարակաւ ձիւները վրա վաղցին սարի գագաթը լանջի վրայով եւ մի քանի հարիւր հարդ էր մնացել միայն, որ հասնէին թշնամու հողաթումբերին. բայց եւ այնպէս գնդակների անհղ տարափի ստիպված նրանք յետ քաշվեցին։ Թշնամու կրակը այնքան զարհուրելի էր, որ երբ հետեւակ զօրքը դուրս եկաւ ծառերի յետեւից, կիւսավաշտը առաջնորդող համարեա բոլոր մարդիկ վայր ընկան վիրաւորված։

10-րդ 0-ն. Բուլլէր հետադրում է, թէ երէ նա յարձակմամբ վերցրել է Պետերս-Հօլլը եւ դրա հետ միասին թշնամու գլխաւոր դիրքի Գերիկ նաւով 60 բօէրներ։

Պեսեմբերի 15-ին Նոյն Կայսերական Մեծութիւնները արժանապի պրօֆէսոր եւ կոմպոզիտոր Սօլովիլի յորթ լեւնի հանգէսը իրանց ներկայութեամբ։ Մարիեան թատրոնում խաղացվում էր յօբիլսերի «Կօրեկիս» օպերան։

17 փետրվարի

10-րդ 0-ն. Իրլանդիայում, Մայիօ քաղաքում այսօր տեղի ունեցած պարլամենտական ընտրութիւնների ժամանակ, ընտրված է նախկին նախատ 0-րդանէլ 2,410 ձայնով։ Միւս նախկին նախատ Սօբրիլ, որ այժմ բօէրների զօրվ մէջ իրլանդական բրիգադայի հրամանատար է, ստացաւ 427 ձայն։

10-րդ 0-ն. Բօբրոսի պաշտօնական հետագիրը Պաարդէբէրդից հաղորդում է. «Կրօնի երէկ ճանապարհ ընկաւ իր ընտանիքի, գնեալ լալ Պրիցմանի եւ գլխաւորական հետեւորդների հետ, իսկ կանաք եւ երկրանները ուղարկելիցին հայրենիք։ Եւ այցելելի երէկ բօէրները բանակատեղին եւ ապաւել տեսնելով, թէ որ պիտի արուեստով եւ ետանգով նրանք իրանց դիրքերը համարեա անմատչելի էին դարձրել։ Գինեալ Կեմնետ երէկ նորից դուրսեց Բենալ բուրքը։

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԱՆ ԲԱՐՁՐ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ (9—11 տարեկան) և I ԴԱՍՏԱՆՈՒՆ (10—12 տարեկան) մանկու ընտելությունը նշանակված են այս տարվա ԱՊՐԻԼ 25-ին ե՛ր 28-ին: ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԱՆ ՍՏՈՐԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔԸ ԵՐԵՒԱՆԵՐԸ ընդունված են 8 տարեկան հասակից ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹԵԱՆ:

ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԸ ուսման համար—ստորին պատրաստականում—80 ռ., բարձր պատրաստականում—100 ռ., առաջին դասարանում—120 ռոբլի:

ՈՒՄՄԱՆ ՍԿԻՋԲԸ ԱՅՍ ՏԱՐՎԱՑ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ:

Ընթացականության իրաւունքները—1) ՁԻՆՈՒՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՋ առաջին կարգի արտոնություն ունեն, 2) ԲԱՐՁՐԱԳՈՑԻ ԴՊՐՈՑՆԵՐ ՄՏՆԵՆՈՒ և պետական ծառայություն մէջ ունեն Բէախի ուսումնարանն աւարտող իրաւունք, 3) ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲՈՂՈՐ ԸՆԹԱՏԱԿԱՆՏՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ անձնական պատուաւոր քաղաքացու կոչումն և ևս բացի դրանից ուսման մէջ առանձին առաջադիմություն ցոյց տուողները արժանանում են «ԱՌԵՒՏՐԻ ԿԱՆԴԻԴԱՅԻ» կոչման և պարգևատրվում են ՈՍԿԵԱՅ և ԱՐԾԱԹԵԱՅ մեդալներով:

ԽՆԴԻՐՆԵՐԻՆ՝ յանուն դպրոցի գերեկտոր **ՍՍԱՏԱԿԻ ՍՈՎԵՏՆԻԿ ՄԱԿՍ ՕՍԻՊՈՎԻՉ ՖԻՇԵՐԻ** կոչման, ծաղկի և մարիբալան վկայականների հետ միասին ընդունվում են ամեն օր, առաւօտեան 11—12 ժամին ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ՄԱՆՈՒՅԱՏՈՒՐԱՅԻ ԿՕՄԻՏԵՑԻ ԴԻՒՆԱՍԱՆ ՄԵՋ (Սերգիեվսկայա, տուն № 1): Նոյն տեղում էլ ՁՐԻԱԲԱՐ կարելի է ստանալ ընտելությունների ծրագիրն և Թիֆլիսի Առևտրական դպրոցի կանոնադրությունը:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՏՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացություն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մանկուլ Տրապիզոն, Սաւսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 16/28 փետրվարի ժՕՐԺԻ չորեքշաբթի, նաւապետ ԲՈՒՆ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցություն տոմարները արվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցություն Բաթումի և Անադոլիայէն մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հրախալին նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկությունները ուսանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերության գործակալներին:

ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր ԴՄԵՆՈՒՆ, Նաբեբէժնայա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեան, Սիմոն փող. Ուշախարուխովի և Մայսուրցաճի քաղաքապետ: ԲԱԳՈՒՆ—կար. Վ. և Ի. Մոլիսֆեաններին, Նաբեբէժնայա փողոց, տուն Կրասնիխովի, № 27: ՆՕՎՕՐՈՎ—ՍԻՅԱՎ—Վաղիկաւկազի երկաթուղու առևտրական գործակալություն (և. հ. չ.) 6—20

Շերաւի սերսեր Թիրքիայի և Լիւնի,

Բաղադրի ամենալաւ տեսակներից, ընկած է Կովկասեան կենտրոնական չիքամալանական կապարանում Թիֆլիս: Ստացած է առաջին տեսակ (ցիլիւնար կոչված) ապուտակ լանդիթով: Ցանկացողները կարող են դիմել Բաթում՝ Ա. Մախոբեան, Թիֆլիսում՝ Արշակ Ստեփանեանց, Երեւանեան հրապարակ, ծխախոտի խանութ Մ. Պ. Սափարեանցի:

Ուշադրութիւն. — Իւրաքանչիւր տուփը առանձնապէս ընտելեան է ներթափված, սերսի կշիռն է 6—7 մսկալ տուփերու մէջ, ֆիրմաներն են. Արմաշի, Գէնչեան, Դաւնիկ, Արթնեան և այլն: 4—5

ЖЖЕННЫЙ КОФЕ
ПРОДАЖА ВЕЗДЬ
C.C.I.Y.K.
M. 35941

ԲԱԳՈՒՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Եթանում է ի գիտութիւն ընդհանուրի, թէ 1900 թւականի յունվարի 1-ից, կառավարութեան թոյլտուութեամբ, բացվել են Բագում ապրանքային (вапрантные) պահեստների զանազան տեսակ ապրանքների ընդունելութեան և պահպանութեան համար, պահեստի և գրաւ գներով վկայաթղթեր տալու իրաւունքով, որոնցով կարելի է փոխադրութիւններ ստանալ: Պահեստները կրում են

«ԳՐԻԳՈՐԻ ԲԵՆԵՍՈՍԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐ ԲԱԳՈՒՄ»

անունը: Բացի դրանից վարչութիւնը յանձն է աւելում, ըստ ցանկութեան ապրանքատերերի, ապրանքները ընտանաւորել, ընդ թափել, տեղափոխել մի տեղից միւս տեղ, ապահովագրել, բաժանել տեսակների, չորացնել և վճարել մաքսային և այլ տուրքեր այն ապրանքների համար, որոնք ուղղված կը լինին պահեստների հասցէին և առհասարակ կառարում է այն բոլոր առևտրական գործողութիւնները, որոնք նախատեսւած են Առևտրական Կանոնադրութեան 719-րորդ յօդուածում, որոնց հետ նաեւ վերադրի վճարներ ստանալ ապրանք ստացողներից և նորից ուղարկել այն ապրանքները, որոնք ուղարկվելու են տրանզիտով: Վճարը պահպանութեան համար աւելում է ֆինանսների մինիստրութեան որոշած տակաւոյով, որ պարբերաբար կը հրաւարակվի ի գիտութիւն ընդհանուրի:

Տեղեկութիւններ ստանալու համար պէտք է դիմել վարչութեան գրասենեակին, որ գտնվում է Բագում, Միխայլովսկայա փողովի վրա, Կրասնիխովայի տանը, իսկ պահեստները գտնվում են նաւահանուցի մօտ, ծովափի վրա, № 34 հողաբաժնում: Հեռագրների հասցէն՝ Ба-ку-Бененсонъ.

Лучшая аттестация отъ учебного начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.

преполагаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италянская), 2) Коммерческая арифметика, 3) Коммерческая экономія, 4) Арифметика на счетахъ, 4) Торговья и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Больше 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ января мѣсяца.

29—100

Годъ занятій десятый.

Преподов. ведется по собств. сочинениямъ.

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպատակ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Պազմավէպ» բացառիկ պրակ մը հրատարակէ: Թերթին, երկարութիւնն է 42 հարկերը զամբար, լայնը 30 հարկերը զամբար: Թերթը կը բաղկանայ 40 լիթերէ և ամեն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է: Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր: Կը պարունակէ ժողովրդեան ուշադրաւ, հետաքրքրական և օգտակար յօդուածներ: «Պազմավէպ» այս բացառիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրեւ անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ» մը Illustration Arménienne, նման եւրոպական մեծ ազգայնաբանական պատկերազարդ թերթերու:

Կը տպուի մի օրին հազար և ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն: Դիմել է 2,50 ֆր. 1 ռուբլի, 50 կոպէկ:

Այս ծանուցողով կը հրաւիրենք մերազնեայ այն ամեն ազնիւ ու զիւած անձնաւորութիւնները, որ բաժանորդագրուելով այս բացառիկ պրակին, հաճեստ լուծայ մը բարեհաճին ձգելու հայ որբանոցներու գանձանակին մէջ:


Բաժանորդագրաց անունն, և ով որ այս նպատակաւ որբանոցներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը և որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Պազմավէպ» պրակներուն մէջ:

Այս բացառիկ թերթին մէջ կը տպուին նաեւ ծանուցումներ, մէկ տողի դին է 25 սանտիմ:

Փափագողք փութեն յղել իրենց ծանուցումները: Մեր հասցեն է՝ Rédaction de la Revue «PAZMAVEB» (S t Lazare)

VENISE
(Italie)

4—5



Առևտրական մարկ հաստատուած կառավարութիւնից:

Ընկերութեան թէյը ծախու է գտնվում բոլոր լաւ մագաղաններում:

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՊԱՐՄԻՑ ՇԱՀԻ

պալատի հայթաթողներ

ԹԵՅԻ ԱՌԵՒՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վ. ՎԻՍՈՅԿԻ ԵՒ ԸՆԿ.

Մօսկվայում:

ԲԱՅՎԱՄ ԵՒ Ն. Տ. ՅՈՒՆՎԱՐԻ 1-ից ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ

Թիֆլիսում:

Մայրան, տ. Գ. Ե. ԲԱՅԱՆԴՈՒՐՈՎԻ

Ընկերութեան թէյը ծախու է գտնվում բոլոր լաւ մագաղաններում:

16—20

Թիֆլիսի Այգեգործական դպրոցը

Եթանում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թ.ի աշնան և 1900 թ.ի դարձած ծախվում է նոյն այգեգործական դպրոցում, պակասեցրած գներով մօտ 4000 մէկ և երկու տարեկան ամենալաւ տեսակների մրգեղէն ծառեր և 50,000-ից ավելի դարդաձառեր, փչածառեր, ծառաղաղար և տերևաղաղար ծառեր և թուփեր մէկ տարեկան հասակից մինչև հինգ:

(և. հ. չ.)

40—40


Բժշկարար Կեֆիր և Կոռմիս

Օ. ԿՕՐՈՆԱ

Թոյլաւորված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մէկ դարձել է Երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կոռմիս պատրաստելու համար: Կարելի է ստանալ Օ. Կորոնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուրաբովի: Բաժանմունքում, Միքայէլեան փողոց, օֆիցէրների անտեսական ընկերութեան խանութին կից:

Առաւելցնելին, ուսանողներին և անտեսական ընկ, անդամներին կը լինի զիջում: Զիջում կուրենան և այն քաւորները, որոնք կը ներկայայնեն բժշկից առանձին դեղատոմս: Ցանկացողներին՝ կէֆիր ու կոռմիս կարելի է տուն ուղարկել: 38—50

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենալաւ: Գանձաւոր վաճառքի քարահանքից ամենալաւ տեսակի «ԼԱՐԱՐԱՎԱ»:




— Զ Ր Ը Ղ Ս Ց Ա Ք Ը Ր Ե Ր —

մատչելի գներով և զանազան մեծութեան:

Մեր հասցէն. Евлаха, контора Мелик-Пашаянъ.

Որովհետեւ վերջերս երեսցել են նաեւ ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ քարեր են կանգնած, ուստի ինդուում ենք ցանկացողներին դիմել միմայն մեզ: Գարահանքի կապալաւու՝ Արախաւ Հապան-Չալալեանց 40—40



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ

Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների:

ԲԻՐՐՈՆ ԵՒ ՆՈՐՈՒՄ

կառուցանել

Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործարաններ

ԳԱՋԱ-ՇՈՒԹԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելու հեռաւորութեան վրա:

ՇԻՆԵՐԱՐԱՆՆԵՐ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՐՈ

Իմաներ Ն. Բ. Պասսեկի

Тифлисъ, Михайловская ул. № 116.

Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—

Пассеку.

Տէլէֆոն № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՏՈՐ և ՏԱԳԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐԳԵԼ

ամեն տեսակ

տիւրերներ, խողովակներ, մեքենաներ և ջրաններ:

Կ Ա Ռ Ո Ւ Ց Ա Ն Ե Ն

Ե Ր Կ ա թ է Կ ա մ ա լ Ը ն և

և տեսակներ:

ՏԵՄԵՆՏԻ ՎԱՋԱՐՈՒՄԸ

(և. հ. չ.)

62—100